ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված ՎՊՄՐ–ի ՀՅ ԳԱԱ ակադեմիկոս Գ.Բ. Ջահուկյանի անվան հայոց լեզվի ամբիոնի հիմնադրման 35–ամյակին. Երևան–Վանաձոր, «Ջանգակ–97» հրատ., 2005, 175 էջ:

Ժողովածուն ընդգրկում է քսանվեց զեկուցման նյութեր: Նախորդ տարվա աշնանը կայացած գիտաժողովին զեկուցումով հանդես էին եկել ՀՅ ԳԱԱ ակադեմիայի լեզվի ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Վանաձորի մանկավարժական ինստիտուտի ճանաչված լեզվաբաններ, փիլիսոփաներ, գրականագետներ և տերմինաբաններ, ընդ որում թե ավագ և թե կրտսեր սերնդի ներկայացուցիչներ:

Զեկուցումները նվիրված են եղել արդի հայերենագիտության, համեմատական լեզվաբանության, ճանաչողության իմացաբանության, ազգանվանագիտության տարբեր խնդիրների, որոնք բավականին արդիական են հայագիտության զարգացման ներկայիս փուլի տեսակետից: Նյութերը հիմնականում տպագրված են հայերեն լեզվով (մեկ դեպքում ռուսերենով):

Միանգամայն դիտվելի է այն, որ հանդես են բերել Վանաձորի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի աշխատակիցները ամբիոնի վարիչի գիտական ղեկավարմամբ, այլև գրքի տպագրությունը հովանավորող Վանաձորի քաղաքապետարանը:

Նյութեր Աշտոցյան գրքերի 1600–ամյակին նվիրված գիտաժողովի (16–17 հունիսի 2005 թ.), Երևան, «Ջանգակ–97» հրատ., 136 էջ:

ՀՅ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմակերպած գիտաժողովի սույն նյութերն իրենց բնույթով խիստ բազմազան են, բովանդակությամբ միանգամայն ուշագրավ: Ժողովածուն ընդգրկում է 15 զեկուցում՝ նվիրված գրական հայերենի և բարբառների այս կամ այն երևույթի ծագումնային, նկարագրական վերլուծությանը, գրական նորմայի հնչարտաբերական, շարահյուսական բաղադրիչների դրսևորումներին հայերենի զարգացման արդի փուլում:

Զեկուցումներով հանդես են եկել Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ և միջին սերնդի մասնագետները, ինչպես նաև հանրապետության գիտական այլ հաստատությունների ներկայացուցիչները: Զեկուցումներն աչքի են ընկնում հարցադրումների ոչ միայն ավանդական հատկանիշով, այլև նոր սկզբունքների գործադրմամբ:

Ժողովածուի լույս ընծայումը վկայում է, որ գիտական այդ հաստատությունը շարունակում է կարևոր տեղ ունենալ հայերենագիտության բնագավառում:

Ջահուկյանական ընթերցումներ. ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի հիշատակին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երևան, 2006 թ., հուլիսի 3–4), Երևան, «Վան Արյան» հրատ., 2006, 196 էջ:

Ժողովածուի մեջ ընդգրկված 28 զեկուցումների մեծ մասը կարդացվել է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի լեզվի ինստիտուտի աշխատակիցների կողմից և արտացոլում է զեկուցողների կամ թեմային վերաբերող որևէ մասնավոր հարց, կամ թեմայից դուրս եկող հարցադրում: Ինստիտուտի վաստակաշատ լեզվաբանների զեկուցումների կողքին տեղ են գտել նաև երիտասարդ ուսումնասիրողների աշխատանքներ, որը միանգամայն դրվատանքի է արժանի: Թեմաներն այս կամ այն կերպ առնչվում են Գ. Ջահուկյանի գիտական վաստակի հետ իբրև տուրք մեծանուն գիտնականի անվան: Որոշ զեկուցումների մեջ նկատելի են ոչ վերջնական ճշգրտված փաստեր, նաև վերջիններիս հպանցիկ վերլուծություն և գնահատություն:

Ժողովածուի մեջ ընդգրկված են նաև գիտական այլ հաստատությունների գիտաշխատողների նյութեր, որը նույնպես գնահատելի է, հատկապես գիտական կազմակերպվածության տեսակետից:

Այս ժողովածուն նս հաստատում է, որ անցած մեկ–երկու տարում շարունակվում են հայերենագիտական հարցերի ուսումնասիրության մեջ որոշակի եռանդի ներդրումը և գիտական աշխատանքի տոկունությունը:

Լ.Շ. Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարը (V դար), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2006, 310 էջ:

Հեղինակի տարիների ընթացքում կատարած բառագիտական աշխատանքի պարբերաբար շարադրանքը ներկայացնող սույն ուսումնասիրության մեջ քննության են առնված գրաբարի բառապաշարի ծագումնային շերտը (բնիկ, նաև փոխառյալ իրական, ասորական, հունական), ինտենսիվությունը (նվազ հաճախականության բառեր և այլն), ինքնուրույն և թարգմանական գրականության երևելի նմուշների, նաև Սուրբ Գրքի բառագործածությունը: Առանձին ուշադրության առարկա են ժամանակի գրական նորմայի բառապաշարը, բարբառային տարբերակները (հնչյունական, բառային և այլն), նորահայտ բառերը և այլն:

Գիրքը գրված է արդի հայերենագիտության առանցքային չափանիշների գործադրմամբ, հուշարձանների քննության նկատմամբ ուրույն մոտեցումով: Այն օգտակար է ոչ միայն հայերենի, այլև հայ բանասիրության մասնագետներին, ուստի այն պետք է կարդալ և ուսումնասիրել:

Գ.Բ. Թոսունյան, Գրաբարի բառարանագրությունը, «Ջանգակ–97» հրատ., Երևան, 2006, 228 էջ:

Սույն աշխատանքը հեղինակի դոկտորական ատենախոսությունն է, որի ուղղությամբ կատարվել է տարիների տքնաջան ուսումնասիրություն: Այն պսակվել է հաջողությամբ, իսկ սույն գիրքն արդեն գիտական լայն շրջանառության մեջ է իբրև հայերենի բառապաշարի որոշակի շերտի բառարանային ուսումնասիրություն: Այստեղ քննության են առնված հիմնականում գրաբարի

խոշոր բառարանները, որոնք ամբարում են մեր լեզվի հնագույն շերտը, որն, անշուշտ, մշակութային ձեռքբերում է:

Գիրքը գրված է հարցերի լայն ընդգրկումով, վերլուծության մանրամասնությամբ և բարեխիղճ ուսումնասիրողի հոգածությամբ:

Վազգեն Համբարձումյան, Ակնարկներ հայ բառարանագիտության պատմության (XVII դ. վերջ – XIX դ.), հատոր 1, «Զանգակ–97» հրատ., Երևան, 2006, 140 էջ:

Գիրքը նվիրված է հայ բառարանագրության առանձին խնդիրների, նաև տարբեր ժամանակներում երևան եկած հայերեն ոչ ծավալուն (հիմնականում ձեռագիր) բառարանների ուսումնասիրությանը: Ներկայացվում են հայ բառարանագրության արդի փուլի որոշ հարցեր, մինչև այժմ անհայտ մնացած և մասնակիորեն ուշադրության արժանացած հայերեն ոչ ծավալուն բառարաններ, որոնք այստեղ գնահատության են արժանանում ոչ միայն ինքնին, այլև տվյալ բնագավառի և առհասարակ հայոց լեզվի բառապաշարի պատմության տեսակետից:

Աշխատանքը նախատեսված է բանասերների, բառարանագրության և, առհասարակ, հայոց լեզվի պատմության մասնագետների, հայ գրավոր մշակույթով հետաքրքրվողների համար:

Յու. Դավթյան, Հայոց լեզու. փոխակերպումներ, Երևան, 2005, 60 էջ, Յու. Դավթյան, Ժամանակակից արևելահայերենի ուղղագրության ինքնուսույց, Երևան, 2005, 132 էջ:

Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանը հայերենագիտության բնագավառի լավագույն մասնագետներով աչքի ընկնող հաստատություն է, և Յու. Դավթյանը մեկն է նրանցից, որ հատկապես վերջին տարիներին սկսեռուն զբաղվածությամբ գիտամեթոդական աշխատանքներ է հրատարակում նպաստելու հայոց լեզվի ուսուցման և կանոնավոր տարածման գործին: Հիշյալ գրքերը դրա լավագույն վկայությունն են, որովհետև գրված են նյութի լավատեղյակ վերլուծությամբ և անհրաժեշտ մեթոդիկայի կիրառմամբ:

Յու. Դավթյան, Արևելահայ մամուլի լեզուն հետխորհրդային շրջանում, Երևան, 2006, 232 էջ: Յու. Դավթյան, Լրագրային ժանրերի լեզվաոճական արտահայտությունները, Երևան, 2006, 84 էջ:

Գրքերից առաջինը հեղինակի դոկտորական ատենախոսությունն է, որը ներկայացված էր ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում գործող գիտական խորհրդին, և որի համար ատենախոսն արժանացել է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճանի: Թեման խիստ արդիական է, ուստի ճիշտ է վարվել հեղինակը լույս ընծայելով այդ աշխատությունը, որն, անշուշտ, կնպաստի մամուլի բնագավառի աշխատողների աշխատանքին խուսափելու լեզվական անճշտություններից և թյուրիմացություններից: Գիրքն, առհասարակ, օգտակար կարող է լինել նաև ուսուցիչներին, հայերենով հետաքրքրվողներին:

Երկրորդ գիրքն առնչվում է նախորդին թե բովանդակային և թե հե-

տապնդող նպատակի տեսակետից Հայերենի հրապարախոսական ոճի երևույթների իմացությունը կարևոր է մեր լեզվին խորությամբ տիրապետելու տեսանկյունից:

Ռ. Դավթյան, Լեզու և խոսք, «Ոսկան Երևանցի» հրատ., Երևան, 2006, 320 էջ:

Սույն գրքում համատեղված են լեզվականը ու հրապարակախոսական ոլորտին վերաբերող երևույթները, որոնք, ըստ հեղինակի, կարևոր են լեզվի ոչ միայն տեսական, այլև գեղագիտական ճանաչողության ու յուրացման առումով:

Տարիներ ի վեր լինելով լեզվի դասավանդման կազմակերպման ոլորտում հեղինակը հմտորեն է կարողացել ընկալել հայրենի ուսուցման այն խնդիրները, որոնք լուծում են պահանջում բուհական դասավանդման մեջ:

Գիրքն օգտակար է բուհական կրթության համար, նաև մասնագիտական ոլորտում:

Ա.Լ. Մարգսյան, Ժամանակակից հայերենի կետադրությունը. ուսումնական ձեռնարկ, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 2005, 124 էջ:

Սույն գրքի հեղինակը մայր բուհում աշխատող այն երիտասարդ լեզվաբաններից է, ով արդեն առանձին աշխատանքներ ունի ժամանակակից հայերենի ուսումնասիրման մեջ, մանավանդ վերջինիս բուհական դասավանդման բնագավառում:

Գրքում հեղինակը բավականին մատչելի և ճիշտ մշակմամբ ներկայացնում է ժամանակակից հայերենի կետադրության համակարգը աշխատելով այն սահմանել պարզ և հիշելի օրինակներով: Ինչպես մեզանում եղած նման շատ աշխատություններ, սույն գիրքը նույնպես լուծում է իր առջև դրած խնդիրը, այսինքն նպաստել հայերենի կետադրության իմացությանը և գործադրմանը: